«ՄԻԵԴ ԿԱՆՈՆ 39». ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐ. ՍԵՄԻՆԱՐ

06.11.2025 11:10

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը, ՀՊԳ ապաստան հայցողների հարցերով խորհրդատու-փաստաբան Լևոն Վարդապետյանը և ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող իրավաբանական օգնության թիմի փաստաբան Անուշ Շահրամանյանը աշխատանքային այցով գտնվում են Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները ՄԱԿ փախստականների հարցերով հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մասնակցել են «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կանոն 39. միջազգային պաշտպանության կարիք ունեցող մարդկանց համար միջանկյալ միջոցներ» թեմայով սեմինարին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })